# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԶԱՌԻԹԱՓԻ ԱՎԱԳԱՆԻ

REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

13 հունվարի 2013թ. ՈՐՈՇՈՒՄ 1

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու թիվ 1 նիստի օրակարգի հարցերը.

1.Զառիթափ համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը,աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

2.Զառիթափ համայնքի 2013թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին:

3.Զառիթափ համայնքի 2013թ-ի բյուջեի քննարկման և ընդունման մասին:

4.Զառիթափ համայնքի քառամյա ծրագրի հաստատում:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ավագյան Ա. /բացակա/
Դավթյան Դ.
Ասլանյան Ե.
Ալավերդյան Լ.
Բաբայան Վ.
Գրիգորյան Գ. /բացակա/
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

հավելված N 1
Զառիթափ համայնքի ավագանու 2013 թ.

15--- 01 - 2013 ի N 2 որոշման

Զառիթափ համայնքի ղեկավարի, աշխատակազմի աշխատակիցների և բյուջետայի ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը , 16

հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակազմի հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը `

| | Յաստիքի անվանումը | հաստիք ային միավորը | պաշտոնային դրույքաչափը | աշխատավա րձը |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետ | 1 | 180000 | 180000 |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 115000 | 115000 |
| 3 | Գլխավոր մասնագետ ֆինանսիստ | 1 | 114000 | 114000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 | 70000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 | 70000 |
| 6 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 | 70000 |
| 7 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 | 70000 |
| 8 | Օպերատոր | 1 | 65000 | 65000 |
| 9 | Յավաքարար | 1 | 50000 | 50000 |
| 10 | Վարորդ | 1 | 55000 | 55000 |
| 11 | Գործավար | 1 | 55000 | 55000 |
| 12 | Պահակ | 1 | 55000 | 55000 |
| | ընդամենը | | | 969*12-11628000 |
| 13 | Անասնաբույժ | 0.5 | 60000 | 30000 |
| | ընդհամենը | | | 30*12--360 |
| 2 | Մշակույթի տուն | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 55000 | 55000 |
| 2 | Աշխատակից | 1 | 50000 | 50000 |
| 1 | Գրադարանավար | 1 | 50000 | 50000 |
| | ընդամենը | | | 1860000 |
| | | | | |

Զառիթափ գյուղի գյուղապետ Խ. Դավթյան

քարտուղար Շ. Ազատյան

Հավելված 2

# Զառիթափի մանկապարտեզի անձնակազմի հաստիքացուցակ

| N | Զբաղեցրած պաշտոնը | դրույք | դրույքաչափը | աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 112000 | 112000 |
| 2 | Դաստիրակ | 1 | 92600 | 92600 |
| 3 | Դաստիրակ | 1 | 92600 | 92600 |
| 4 | Դաստիրակի օգնական | 1 | 47000 | 47000 |
| 5 | Դաստիրակի օգնական | 1 | 47000 | 47000 |
| 6 | Հաշվապահ | 05 | 90000 | 45000 |
| 7 | Տնտեսվար օժանդակ բանվոր | 1 | 47000 | 47000 |
| 8 | Երաժշտության ուսուցիչ | 0.5 | 92000 | 46000 |
| 9 | Խոհարար | 1 | 47000 | 47000 |
| 10 | Խոհարարի օգնական | 1 | 47000 | 47000 |
| | Ընդամենը | | | |
| | | | | |

Զառիթափի մանկապարտեզի տնօրեն՝ [signature] Հասմիկ Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

13 հունվարի 2013թ.

## ՈՐՈՇՈՒՄ 3

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> ՀՀ օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածներով:

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

2012թ-ի նոյեմբերի 22-ին կայացած №6 նիստի №: 18 որոշումով`<<Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին>> ընդունված նախագիծը ընդունել որպես հիմք;

Քվեարկության արդյունքները կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ`

Ավագյան Ա. /բացակա/

Դավթյան Դ.

Ասլանյան Ե.

Ալավերդյան Լ.

Բաբայան Վ.

Գրիգորյան Գ/բացակա/

Գևորգյան Գ /բացակա/

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

հավելված

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով

## ավագանին որոշեց

I .Սահմանել ` Զառիթափ համայնքի 2013 թ. Տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը .

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան ` նոր շենքերի , շինությունների (ներառյալ` ոչ հիմնական ) շինարարության (տեղադրման ) թույլատրության համար տեղական տուրք սահմանվում է `
հիմնական օբյեկտների համար `

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում` այգեգործական (ամառանոցային ) տների ,ինչպեց նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 դրամ;

բ) սույն կետի «ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 20000 դրամ ;

բբ) 501- ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 30000 դրամ:

բգ)- 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 40000 դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար `

գ) մինչև 20 մինչև քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 3000 դրամ;

դ ) 20 և ավեուի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 5000 դրամ;

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման ,վերականգնման , արդիականացման , աշխատանքների ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլատվություն չպահանջվող դեպքերի ) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում` ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ` 1000 դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել 1000 դրամ : տեղական տուրք :

5.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար սիահմանել 1500դրամ տեղական տուրք:

6. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել 150000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , ժամը 24.-00ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000 դրամ .

գ) խաղատների կազմակերպման համար 500.000 դրամ

դ) շահումով խաղերի կազմակերպման համար 250.000 դրամ

8 . Համայնքի տարածքում արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր ամսվա համար 500 դրամ 1 քմ.-ի համար:

9) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 200 դրամ .

տեղական վճարներ

10) Մանկապարտեզ հաճախող երեխաների համար տեղական վճար սահմանել 100 դրամ յուրաքանչյուր օրվա համար ( ծնող գանձում ) :

11 ) Տ.Ի.Մ. կողմից կազմակերպվող աճուրդների և մրցույթների ծախսերի փոխհատուցման համար տեղական վճար սահմանոլ 500 դրամ:

Նիստը նախագահում էր Խ.Դավթյանը

քարտուղարում էր Ճ.Ազատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

13 հունվարի 2013թ.

# ՈՐՈՇՈՒՄ 4

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ԲՅՈՒՋԵՅԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 -րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Զառիթափ համայնքի 2013թ.-ի բյուջեն ըստ հոդվածների, համաձայն հավելվածի;

Քվեարկության արդյունքները կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ավագյան Ա. /բացակա/

Դավթյան Դ.

Ասլանյան Ե.

Ալավերդյան Լ.

Բաբայան Վ.

Գրիգորյան Գ /բացակա/

Գևորգյան Գ

Համայնքի ղեկավար՝ Խ.Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ , Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ./ tel (374 - 282) -91-5-07

հավելված

15-01-2013թ.

Զառիթափ համայնքի 2013թ-ի բյուջեի ըստ հոդվածների;

եկամտային մասը ըստ հոդվածների

Ընդամենը եկամուտներ 26108.5 հազար դրամ

*I. հարկեր և տուրքեր հոդված 7100- 4706. հազար դրամ այդ թվում.*

1. Գույքային հարկեր անշարժ գույքից հոդված 7131-2120.271 հազար դրամ

Գույքահարկի համայնքի տարածքում գտնվող շենքերի

ա/ շինությունների համար հոդված 300 հազար դրամ

բ/գույքահարկի փոխադրամիջոցներից 7136-2186 հազար դրամ

գ/հողի հարկ համայնքի տարածքում գտնվող հողերի համար 1820 ,271հազար դրամ

2. Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ հոդված 7145-400 հազար դրամ

ա/համայնքի տարածքում շենքերի,շինությունների տեղադրման թույլտվության համար -30 հազար դրամ

բ/համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար 50 հազար դրամ

գ/Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար - 300 հազար դրամ

դ/համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար 20 հազար դրամ:

Այլ եկամուտներ ՝ հոդված 7400-2366 հազար դրամ,որից

համայնքի սեփականությունը համարվող հողերի վարձակալության վարձավճարներ -1250 հազար դրամ:

Մուտքեր տուժերից և տուգանքներից հոդված 7431- 200հազար դրամ,այդ թվում վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ ---- 200 հազար դրամ

Այլ եկամուտներ 7451 ----- 916 հազար դրամ

,որից օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ --- 916 հազար դրամ

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ հոդված 7331 ---19600,8 հազար դրամ:

Համայնային ծառայություններ /հազար դրամով/

1.Տեղական ինքնակառավարում

2111 վարչական բյուջե -17853 ,0 h.դ. ֆոնդային բյուջե - 600, h.դ,

2161 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

վարչական բյուջե------ -300,0 հազար դրամ

2130 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 70 h,դ.

Տնտեսական հարաբերություններ

Նախագծային աշխատանքներ 2000.0 h դ

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Փողոցների լուսավերում 2641-------1319.788

Հանգիստ մշակույթ և կրոն. վարչական բյուջե

2811 Հանգստի և սպորտի ծառայություններ -500,0 h.դ.

2823 Մշակույթի տուն - 1360,0 h.դ.ֆ/բ 250 h.դ

2824 Այլ մշակութայինկազմակերպություններ 250

2821 Գրադարան -620,0 h.դ. ֆ/բ 50 h.դ

Կրթություն

Նախադպրոցական կրթություն

2911 Վարչական բյուջե -10652 ,0 h.դ.

3071Սոցիալական հատուկ արտոնություններ 600.0 h.դ

3112 Համայնքի պահուստային ֆոնդ 1157

Քվյարկության արդյունքները

Նիստի նախագահ Խ.Դավթյան

քարտուղար Շ . Ազատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

13 հունվարի 2013թ.

# ՈՐՈՇՈՒՄ 5

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Զառիթափ համայնքի քառամյա ծրագիրը,2013-2016թ.թ. համար:
Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ավագյան Ա./բացակա/

Դավթյան Դ.

Ասլանյան Ե.

Ալավերդյան Լ.

Բաբայան Վ.

Գրիգորյան Գ.

Գևորգյան Գ. /բացակա/

Համայնքի ղեկավար՝ Խ.Դավթյան